# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**16.07.2025թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-25/43**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **«26» սեպտեմբեր . 2025թ.**

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Բ. Մարգարյանի, որը գործում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 16.07.2025թ-ին. կնքված ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-25/43 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 Տվյալների փոխանցման շարժական 6 հատ VLAN քարտերի հաղորդագրություններ ուղարկելու սահմանաչափի ավելացում, յուրաքանչյուր քարտի համար մինչև 1000 ՀՀ դրամի չափով:
1.2 Պայմանագրի գինը ավելացնել 24000 /քսանչորս հազար/ ՀՀ դրամով: Պայմանագրի նոր գինը սահմանել 288000 /երկու հարյուր ութսունութ հազար/ ՀՀ դրամ:
1.3 Պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:
1.4 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե** | **«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ** |
| **ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա** | **ք.Երևան Արգիշտի փողոց 4/1** |
| **Ֆ/Ն գործառնական վարչություն** | **«Կոնվերս Բանկ» ՓԲԸ** |
| **ՀՎՀՀ 00243582** | **Հ/Հ 193003028944300** |
| **Հ/Հ 900011038701** | **ՀՎՀՀ 01551651** |
| **Գլխավոր քարտուղար** | **Տնօրեն՝ Ա. Ավետիսյան** |
| **Կ. Մարգարյան** | |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

*Հավելված N 1*
*«16» հուլիսի 2025թ. կնքված*
*ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-25/43 ծածկագրով պայմանագրի*
*«26» սեպտեմբերի 2025թ. կնքված համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ* ՀՀդրամ

| | | Ծառայության | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 32551140/2 | հեռախոսային ցանցեր | - | - | - | - | - | - | - | - | 264000 | 288000 | 288000 | 288000 | **288000** |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե**
**ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա**
**Ֆ/Ն գործառնական վարչություն**
**ՀՎՀՀ 00243582**
**Հ/Հ 900011038701**
**Գլխավոր քարտուղար**
**Կ. Մարգարյան**

(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ**
**ք.Երևան Արգիշտի փողոց 4/1**
**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1930030289444300**
**ՀՎՀՀ 01551651**
**Տնօրեն՝ Ա. Ավետիսյան**

(ստորագրություն) Կ.Տ